Մրրկաց երագութիւնն։ — Մրրկաց երագութիւնն 'ի Պելճիա ժամուան մէջ գրեթէ 45 քիլոմեդր է. 'ի Հոլանտա, ըստ աստղաբաշխական զննութեանց անցեալ ամին, ժամուան մէջ 50 քիլոմեդր է. 'ի Սարբիա և Կարինտիա ըստ զննութեանց 1886 և 1887 ամաց, 29 քիլոմեդր է. 'ի հիւսիսային Գերմանիա մրրկաց արագութիւնն է 41 քիլոմեդր, 'ի Գաղղիա 41, 3, Իտալիա 35 քիլոմեդր, 'ի Նորուեկիա 30 քիլոմեդր։

ՑԻՇԱՏԱԿ ԵՒ ԿՍԿԻԾ

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՎՇՏԱՀԱՐ ՍՐՏԻ

Ո՞ւր էք մանկութեանս իմ չքնաղ օրեր,
Ուր չէր դառնութիւն սրտիս իմ ծանօթ,
Ուր երազ մ'անոյշ զիմ հոգիս կ'օրէր,
Ուր աշխարհ չէր ինձ բանտ անլոյս անօդ։

Ըզձեզ յաւիտեան, աւաղ, կորուսի,
Եւ ձեր հետ շրջմանցս իմ կորաւ ժըպիտ.
Աչկունք իմ անժամ անկան ի փոսի,
Ցամքեցաւ կենաց յիս աղբիւր վըճիտ։

Օր մի կարծեցի լինել երջանիկ,
Վահ և այն երազ ոչ տևեց երկար,
Հրեշտակն այն թըռեաւ և ես կեամ մենիկ,
Հոգւով դեռ յօժար, բայց մարմնով տըկար ...։

Կ'ապրիմ, այլ վաղ իսկ ծանօթ եմ մահուան,
Անհունին կարօտն յիս կը զգամ արդէն,
Երկին իմ հոգւոյս վերջին օթեւան,
Եւ իմ փառք՝ զԱստուած ճանաչել մտէն։

Կարապետ Ա. Ոսկեան

digitised by A.R.A.R.@